Եվրոպական Միության
Խորհուրդ

Բրյուսել, 2008թ. դեկտեմբերի 5

16459/08

EDUC 278
SOC 736
MI 499

Արձանագրությունների Արդյունքներ

հեղինակ:	Խորհուրդ (Կրթություն, Երիտասարդություն և Մշակույթ)
նախորդ փաստաթղթի No:	13593/08 EDUC 220 SOC 544 MI 334
Թեման:	Խորհրդի և անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների՝ Խորհրդի շրջանակներում կայացրած եզրակացությունները Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում Եվրոպական ընդլայնված համագործակցության հետագա գերակայությունների վերաբերյալ

Պատվիրակությունները կից կգտնեն վերոհիշյալ եզրակացությունների նյութը, որն ընդունվել է Կրթության, Երիտասարդության և Մշակույթի Խորհրդի կողմից 2008թ. նոյեմբերի 21-ին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Խորհրդի և անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների՝ Խորհրդի շրջանակներում կայացրած եզրակացությունները մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում Եվրոպական ընդլայնված համագործակցության հետագա գերակայությունների վերաբերյալ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Իրազեկում են.

1. 2002թ. նոյեմբերի 12-ին Խորհուրդը հաստատեց մասնագիտական կրթության և ուսուցման[1] ոլորտում Եվրոպական ընդլայնված համագործակցության զարգացման վերաբերյալ որոշումը: Ավելի ուշ սա հիմք հանդիսացավ ԵՄ անդամ պետությունների, ԵԱԱՀ/ԵՏՏ և թեկնածու երկրների մասնագիտական կրթության և ուսուցման համար պատասխանատու նախարարների, ինչպես նաև Եվրոպական Սոցիալական Գործընկերների և Հանձնաժողովի կողմից 2002թ. նոյեմբերի 30-ին Կոպենհագենում տեղի ունեցած հանդիպման ընթացքում ընդունած դեկլարացիայի համար՝ որպես մի ռազմավարություն զարգացնելու ՄԿՈՒ կատարողականությունը, որակն ու գրավչությունը, որը ընդհանուր առմամբ կարելի է ձևակերպել որպես □Կոպենհագենյան գործընթաց□:
2. Գործընթացի՝ 2004թ. դեկտեմբերի 14-ին Մաստրիխտում իրականացրած առաջին վերանայումը[2] վկայեց, որ առաջընթաց է գրանցվել ընդհանուր գործիքների և սկզբունքների քանակի զարգացման գործում, ինչպես նաև գործընթացը ամուր կապակցեց Լիսաբոնի ռազմավարությանը ու □Կրթություն և ուսուցում□ աշխատանքային ծրագրին: 2006թ. դեկտեմբերի 5-ին Հելսինկիում իրականացրած

[1] OJ C 13, 18.01.2003, էջ 2
[2] Խորհրդի փաստ. 9599/04

երկրորդ վերանայումը[3] կարևորում էր նոր թափ հաղորդելու կարիքը և ընդունված սկզբունքների ու գործիքների շարունակաբար իրագործման երաշխավորումը:

3. 2006թ. դեկտեմբերի 18-ի Եվրոպական Կառավարության և Խորհրդի ցկյանս ուսումնառության գլխավոր կարողությունների վերաբերյալ առաջարկը[4] խորհուրդ է տալիս անդամ պետություններին զարգացնել գլխավոր կարողությունների ապահովումը՝ որպես ցկյանս ուսումնառության իրենց ռազմավարությունների մի մաս: Սրա նպատակն է երիտասարդներին առաջարկել միջոցներ՝ զարգացնելու և հասցնելու այս կարողություններն այն մակարդակի, որը բավարար հիմք կհանդիսանա հետագա ուսումնառության և աշխատանքային կյանքի համար:
4. Կրթության և ուսուցման ոլորտում Լիսաբոնի նպատակների իրագործմանն ուղղված մշտադիտարկման[5] համար սահմանված ցուցիչներին և նշաձողերին հարակցված շրջանակի վերաբերյալ Խորհրդի 2007թ. մայիսի 25-ի եզրակացությունները վերահաստատում են, որ կարիք կա շարունակելու զարգացնել Եվրոպական Վիճակագրական Համակարգի կողմից տրամադրվող տվյալների որակը:
5. Նոր աշխատանքների համար նախատեսված նոր հմտությունների վերաբերյալ Խորհրդի 2007թ. նոյեմբերի 15-ի որոշումը[6] մեծ նշանակություն է տալիս հետագա հմտությունները կանխորոշելու ծայրահեղ անհրաժեշտությանը, որպեսզի գիտելիքահեն հասարակության մեջ հնարավոր լինի մարդկանց ապահովել նոր աշխատանքներով՝ ձեռնարկելով այնպիսի միջոցներ, որոնք նպատակաուղղված են համապատասխանեցնելու գիտելիքը, հմտություններն ու կարողությունները տնտեսության պահանջների հետ, միևնույն ժամանակ խուսափելով հնարավոր թերություններից:
6. Խորհրդի և Հանձնաժողովի 2008թ. Առաջխաղացման Համատեղ Զեկույցը □Կրթություն և Ուսուցում 2010□ աշխատանքային ծրագրի իրագործման վերաբերյալ[7] կարևորում է, որ հետագայում ՄԿՈՒ որակն ու գրավչությունը զարգացնելու մեծ կարիք կա, և այն, որ կրթության ու ուսուցման ոլորտում Եվրոպական համագործակցության համար կատարելագործված ռազմավարական շրջանակի մշակման աշխատանքները պետք է սկսվեն:

---

3 OJ C 298, 8.12.2006
4 OJ L 394, 30.12.2006, էջ 10
5 OJ C 311, 21.12.2007, էջ 13
6 OJ C 290, 4.12.2007, էջ 1
7 Խորհրդի փաստ. 5723/08

7. Եվրոպական Խորհուրդը 2008թ. մարտի 13-ին և 14-ին[8] նախանշեց 2008-2010թթ. համար գերակայությունները և փաստեց, որ □ողջ կյանքի ընթացքում մարդկային կապիտալի ու ստեղծարարության համար ավելի շատ և ավելի արդյունավետ ներդրումները գլոբալիզացված աշխարհում Եվրոպայի հաջողության համար հանդիսանում են ամենակարևոր նախապայմանները□: Ի պատասխան որոշ ճյուղերում հմտությունների պակասի մեծ աճին՝ Խորհուրդը հրավիրեց Հանձնաժողովին՝ ներկայացնելու Եվրոպայի՝ մինչև 2020թ. ապագա հմտությունների կարիքների սպառիչ գնահատականը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական փոփոխության և ծերացող բնակչության ազդեցությունը:
8. Ցկյանս ուսումնառության Որակավորումների Եվրոպական Շրջանակի հաստատման վերաբերյալ Եվրոպական Կառավարության և Խորհրդի 2008թ. ապրիլի 23-ի առաջարկը[9] առաջ է քաշում շարժունությունը և ցկյանս ուսումնառությունը՝ հեշտացնելով ուսումնառության արդյունքների ճանաչումը մի ուսուցման համակարգից մյուսը, ինչպես նաև մի երկրից մյուսը:
9. Կրթության և ուսուցման միջոցով ստեղծարարությունն ու նորարարությունը զարգացնելու վերաբերյալ Խորհրդի 2008թ. մայիսի 22-ի եզրակացությունները[10] վկայում են, որ ավելի ամուր կապ պետք է լինի մի կողմից գիտելիքի և հմտությունների, մյուս կողմից ստեղծարարական և նորարարական ընդունակությունների միջև կրթության և ուսուցման բոլոր մակարդակներում: Ի լրումն՝ պետք է նշել, որ 2009թ. Ստեղծարարության և Նորարարության Եվրոպական Տարվա վերաբերյալ Եվրոպական Կառավարության և Խորհրդի որոշման առաջարկը[11] նպատակ ունի աջակցել անդամ պետությունների ջանքերին՝ ցկյանս ուսումնառության միջոցով խթանելու ստեղծարարությանը՝ որպես անհատի, զբաղվածության, նախաձեռնության և սոցիալական կարողությունների գլխավոր գործոն, իսկ նորարարության համար՝ շարժառիթ:
10. Մեծահասակների ուսումնառության վերաբերյալ Խորհրդի 2008թ. մայիսի 22-ի եզրակացությունները[12] ճանաչում են այն գլխավոր դերակատարությունը, որը կարող է ունենալ սույն ուսումնառությունը Լիսաբոնի ռազմավարության նպատակներին հասնելու համար, մասնավորապես աշխատակիցներին տեխնոլոգիապես

---

8 Խորհրդի փաստ. 7652/08, պարագրաֆ 13, էջ 9
9 OJ C 111, 6.5.2008, էջ 2
10 OJ C 141, 7.6.2008, էջ 17
11 Խորհրդի փաստ. 8935/08
12 OJ C 140, 6.6.2008, էջ 10

պատրաստելու և ավելի տարեց աշխատակիցների ու վերադասների հատուկ պահանջները բավարարելու գործում:

Կարևորում են.

1. Մասնագիտական կրթությունն ու ուսուցումը ցկյանս ուսումնառության էական մասն է կազմում, որը ներառում է որակավորումների բոլոր համապատասխան մակարդակները և սերտորեն կապված է ընդհանուր և բարձրագույն կրթության հետ: Հանդիսանալով և՛ զբաղվածության, և՛ սոցիալական քաղաքականությունների հիմք՝ ՄԿՈՒ-ն օժանդակում է ոչ միայն մրցունակությանը, գործարարությանը և նորարարությանը գլոբալիզացված տնտեսության համատեքստում, այլ նաև անաչառությանը, համախմբվածությանը, անհատի զարգացմանն ու ակտիվ քաղաքացիությանը:
2. Ճկուն կարիերայի ուղիները բացելու և ուսումնառության բոլոր տեսակների ու համատեքստերի միջև սերտ կապեր հաստատելու համար մեծ ջանքեր պետք է գործադրվեն, որոնք կարող են բավարարել քաղաքացիների կարիքները իրենց ամբողջ կյանքի ընթացքում:
3. Ստեղծարարության և նորարարության զարգացումը հատկապես կարևոր է ՄԿՈՒ-ի համար: Սրան հասնելու համար պետք է ակտիվորեն նպաստել ցկյանս ուսումնառության գլխավոր կարողությունների ձեռք բերմանը:
4. Աշխատաշուկայի պահանջները բավարարելու համար, երկընտրանքային համակարգերը, որոնք միավորում են ուսումնառությունը ուսումնական հաստատություններում և աշխատավայրում, պետք է խրախուսվեն, իսկ մեծահասակների համար ուսուցումը պետք է կազմակերպվի ձեռնարկություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում:
5. Հմտությունների կարիքները, թերությունները և պակասը կանխորոշելը, ինչպես նաև Եվրոպական և ազգային մակարդակներով երևան եկած աշխատանքային նոր պահանջների որոշարկումը անհրաժեշտ նախապայմաններ են՝ իրագործելու ՄԿՈՒ քաղաքականությունները, որոնք բավարարում են անհատի, հասարակության և տնտեսության պահանջներին:
6. Տեղեկատվական, ուղղորդման և խորհրդատվական ծառայությունները պետք է կազմեն մի կապակցված համակարգ, որը հնարավորություն կտա

եվրոպացիներին ուսումնառություն ստանալ և հարթել կարիերայի ուղիներ, ինչպես նաև պատրաստ լինել փոփոխությունների իրենց կյանքի ընթացքում:

7. Բարձր աստիճանի որակավորումների պահանջը բավարարելու համար բարձրագույն կրթության դերակատարությունը մասնագիտական կրթության և ուսուցման մեջ պետք է մեծացնել, իսկ աշխատաշուկային ինտեգրվելու գործընթացը՝ արագացնել:
8. Աշխատակիցների, ուսումնառուների և դասընթացավարների՝ մի համակարգից մյուսին, մի երկրից մյուսին անցնելու գործընթացը որակավորումների թափանցիկության և ճանաչման համար պահանջում է Եվրոպական այնպիսի ընդհանուր գործիքների կիրառում ինչպիսիք են Europass-ը, Որակավորումների Եվրոպական Շրջանակը (ՈԵՇ/EQF), Կրեդիտների Փոխանցման Եվրոպական Համակարգը (ԿՓԵՀ/ECTS) և ՄԿՈՒ հետագա Կրեդիտային Եվրոպական Համակարգը (ՄԿՈՒԿԵՀ/ECVET):
9. Եվրոպական ընդհանուր գործիքների կիրառումը հանգեցնում է որակի ապահովման մեխանիզմների օգտագործմանը և ՄԿՈՒ Եվրոպական Որակի Ապահովման Հենքային հետագա Շրջանակի (ԵՈԱՀՇ) իրացմանը, որոնք վճռական դեր ունեն փոխվստահության հաստատման, ինչպես նաև կրթության և ուսուցման համակարգերի արդիականացմանը նպաստելու գործում:

Ճանաչում են.

Կոպենհագենյան գործընթացը սահմանել է նպատակաուղղված գերակայություններ Եվրոպական և ազգային մակարդակներով: Այն հանգեցրել է էական փոփոխությունների ազգային քաղաքականություններում և գլխավոր գործիքների ստեղծմանը թափանցիկության, գիտելիքի ճանաչման, հմտությունների և կարողությունների, ինչպես նաև համակարգերի որակի համար:

Եվրոպական մակարդակով աշխատանքային նորացված մեթոդները բարձրացրեցին այդ գործընթացով զբաղվող մարդկանց իրազեկվածությունը և խրախուսեցին նրանց՝ կիրառելու մատչելի գործիքներ:

ՈԵԾ-ը, հատկապես, որակավորումների ազգային համակարգերի և շրջանակների հաստատմանը նպաստելու, ինչպես նաև ՄԿՈՒ կարգավիճակը բարելավելու և արդիականցնելու հիմնական գործոնն է:

Բացի այդ, Կոպենհագենյան գործընթացը նպաստել է ՄԿՈՒ դերակատարման կարևորմանը Լիսաբոնի ռազմավարությունը իրագործելու համար՝ հաշվի առնելով նրա երեք կարևոր բաղադրիչները՝ մրցունակություն, զբաղվածություն ու սոցիալական համախմբվածություն: Ուստի, այն պետք է ի նկատի ունենա կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական համագործակցության համար մշակվող ռազմավարական հետագա շրջանակի գերակայությունները, որին այն պետք է ամբողջովին ինտեգրված լինի:

Սույն համատեքստում ՄԿՈՒ-ն պետք է պահպանի իրեն բնորոշ հատկությունները: Այս դեպքում խոսքը գնում է պատասխանատվությունը բաշխելու մասին, որն իր մեջ անկասկած ներառում է անդամ պետություններին, սոցիալական գործընկերներին ու ճյուղային կազմակերպություններին գործընթացի բոլոր փուլերում: ՄԿՈՒ որակի և գրավչության համար սա հանդիսանում է անհրաժեշտ նախապայման:

Շեշտում են.

1. Մոտեցում պետք է ընդունվի, որը թույլ կտա տարբեր գործիքներին կիրառվել կապակցված և հավելյալ եղանակներով:
2. Անհրաժեշտ է քաղաքացիներին և բոլոր այլ շահագրգիռ կողմերին ապահովել ընդհանուր գործիքների մասին լիարժեք տեղեկատվությամբ, որպեսզի հեշտ լինի նրանց կիրառումը:
3. Տվյալ եզրակացություններում կարևորված քայլերը պետք է լինեն կամավորական և կիրառվեն լիարժեք համագործակցության միջոցով: Գործիքների բարեհաջող մշակումն ու իրագործումը պահանջում են շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությունը:

Համաձայն են.

2002թ. ի վեր Կոպենհագենյան գործընթացում հաստատված գերակայությունները և ուղենիշները ուժի մեջ են: Ուստի, անհրաժեշտ է հետամուտ լինել նրանց իրագործմանը և 2008-2010թթ. համար առանձնացնել հետևյալ չորս գերակայությունները.

1. ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Շատ կարևոր է մշակել ուսումնառության արդյունքների վրա հիմնված որակավորումների ազգային համակարգեր և շրջանակներ, որոնք կապակցված կլինեն Որակավորումների Եվրոպական Շրջանակի հետ, և իրագործել ՄԿՈՒ Կրեդիտային Եվրոպական հետագա Համակարգը (ՄԿՈՒԿԵՀ) Որակի Ապահովման Եվրոպական Հենքային հետագա Շրջանակի (ՈԱԵՀՇ) հետ միասին, որպեսզի մեծանա փոխվստահությունը:

Հիմք ընդունելով սա՝ ներքոհիշյալը պետք է մշակվի.

- թռիչքային ծրագրեր, համապատասխան մեթոդներ և օժանդակող գործիքներ,
- սխեմաներ և գործիքներ ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնառության արդյունքները որակավորումների ազգային շրջանակների, Որակավորումների Եվրոպական Շրջանակի և ՄԿՈՒԿԵՀ-ի հետ միասին օրինական ճանաչելու համար,
- որակի ապահովման գործիքներ,
- տարբեր գործիքների միջև կայունություն:

2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Օժանդակում ՄԿՈՒ գրավչությանը բոլոր թիրախային խմբերի համար

- Զարգացնել ՄԿՈՒ-ն աշակերտների, ծնողների, մեծահասակների (և՛ աշխատանք ունեցող, և՛ գործազուրկ կամ պասիվ) միջավայրում և ձեռնարկություններում՝ օրինակ, շարունակելով կազմակերպել հմտությունների այնպիսի մրցույթներ, ինչպիսիք են Եվրոհմտությունները,
- Երաշխավորել ՄԿՈՒ մուտք գործելու և մասնակցության խտրականության բացառումը՝ հաշվի առնելով մարդկանց կամ մերժման վտանգ ներկայացնող խմբերի կարիքները (մասնավորապես դպրոցը վաղ լքողներին, թերի հմտություններ ունեցողներին կամ անընդունակ մարդկանց),

- Հեշտացնել մուտքը դեպի տեղեկատվական, ցկյանս ուղղորդման և խորհրդատվական ծառայություններ ցկյանս ուղղորդումը ցկյանս ուսումնառության ռազմավարություններին ինտեգրելու վերաբերյալ Խորհրդի 2008թ. նոյեմբերի 21-ի որոշման[13] հաջող իրագործման միջոցով,
- Հարթել այնպիսի ուղիներ, որոնք հնարավորություն կտան մարդկանց առաջադիմել՝ անցնելով որակավորումների մի աստիճանից մյուսին՝ ուժեղացնելով կապը ընդհանուր կրթության, ՄԿՈՒ, բարձրագույն կրթության և մեծահասակների ուսումնառության միջև:

Օժանդակում ՄԿՈՒ համակարգերի որակին և գերազանցությանը

- Զարգացնել որակի ապահովման մեխանիզմները Որակի Ապահովման Եվրոպական Հենքային հետագա Շրջանակի իրագործման միջոցով, ակտիվ մասնակցել ՄԿՈՒ ոլորտի Որակի Ապահովման վերաբերյալ Եվրոպական Ցանցին ընդհանուր գործիքները զարգացնելու, ինչպես նաև փոխվստահությունը մեծացնելու միջոցով ՈԵՇ-ի իրագործմանը նպաստելու համար,
- Մեծացնել ներդրումները նախնական և ընթացիկ ուսուցման մեջ գտնվող այն մարդկանց, ովքեր զբաղվում են մասնագիտական կրթությամբ և ուսուցմամբ՝ ուսուցիչներ, դասընթացավարներ, դասախոսներ, ղեկավարներ,
- Հիմնվել ՄԿՈՒ քաղաքականությունների վրա՝ ըստ ճշգրիտ հետազոտությունների ու տվյալների վստահելի վկայության և զարգացնել ՄԿՈՒ վերաբերող վիճակագրական համակարգերն ու տվյալները,
- Զարգացնել որակավորումների ազգային համակարգերն ու շրջանակները՝ հիմնվելով ուսումնառության արդյունքների վրա, որոնք դյուրին են ընկալելու և բարձր որակն ապահովելու համար՝ միևնույն ժամանակ երաշխավորելով համատեղելիությունը Որակավորումների Եվրոպական Շրջանակի հետ,
- Նպաստել ՄԿՈՒ ոլորտում նորարարությանն ու ստեղծարարությանը և կրթության ու ուսուցման միջոցով իրագործել ստեղծարարությանն ու նորարարությանը նպաստելու վերաբերյալ Խորհրդի 2008թ. մայիսի 22-ի եզրակացությունները,

[13] Խորհրդի փաստ. 15030/08

- Զարգացնել լեզվի ուսուցումը և համապատասխանեցնել այն մասնագիտական կրթությանն ու ուսուցմանը բնորոշ հատկություններին,
- Բարելավել ուսումնառության ուղիների թափանցիկությունն ու շարունակականությունը ՄԿՈՒ, ընդհանուր և բարձրագույն կրթությունների միջև:

3. ՄԿՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հիմք ընդունելով սա՝ պետք է հաշվի առնել հետևյալը.

- Շարունակել մշակել նախօրոք պլանավորվող մեխանիզմներ, որոնք կենտրոնանում են աշխատանքների ու հմտությունների վրա ազգային և Եվրոպական մակարդակներով՝ որոշարկելով հմտությունների հնարավոր թերությունները և պակասը, ինչպես նաև տնտեսության և նախաձեռնվող աշխատանքների, մասնավորապես ՓՄՁ-ների հետագա հմտությունների և կարողությունների պահանջներին (և(որակական, և(քանակական առումով) բավարարելը՝ հետևելով Եվրոպական Խորհրդի 2008թ. մարտի 13-ի և 14-ի եզրակացություններին և նոր աշխատանքների համար նոր հմտությունների վերաբերյալ Խորհրդի 2007թ. նոյեմբերի 15-ի որոշումին,
- Երաշխավորել, որ սոցիալական գործընկերները և տնտեսական շահագրգիռ կողմերն ամբողջովին ներգրավված են ՄԿՈՒ քաղաքականությունների մշակման և իրականացման գործում,
- Բարելավել ուղղորդող և խորհրդատվական ծառայությունները՝ այսպիսով, հեշտացնելով անցումը ուսուցումից զբաղվածություն և նպաստելով այն նպատակների իրագործմանը, որոնք սահմանված են Եվրոպայում ողջ կյանքի ընթացքում ուղղորդման ոլորտում քաղաքականությունների, համակարգերի և փորձերի ուժեղացման վերաբերյալ Խորհրդի 2004թ. մայիսի 28-ի որոշման մեջ[14]: Ակտիվ մասնակցել Եվրոպական Ցկյանս Ուղղորդման Քաղաքականության Ցանցին,

[14] Խորհրդի փաստ. 9286/04

- Ուժեղացնել մեխանիզմները, այդ թվում նաև ֆինանսական բնույթ ունեցողները (և(պետական, և(մասնավոր), որոնց նպատակն է խթանել մեծահասակների ուսուցմանը մասնավորապես աշխատավայրում՝ կենտրոնանալով հատկապես ՓՄՁ-ների վրա, որպեսզի հնարավոր լինի նպաստել կարիերայի ավելի լավ հնարավորություններին և գործարարության մրցունակությանը: Այս իմաստով մեծահասակների ուսումնառության վերաբերյալ Խորհրդի 2008թ. մայիսի 22-ի եզրակացությունների մեջ ընդգրկված քայլերը պետք է իրագործվեն,
- Մշակել և իրագործել ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնառության արդյունքների վավերացումն ու ճանաչումը,
- Մեծացնել աշխատանքին վերաբերող ուսուցում անցնող մարդկանց շարժունությունը՝ ուժեղացնելով հանրության առկա ծրագրերը շարժունության միջոցով հատկապես սկսնակների համար: Երիտասարդության շարժունության վերաբերյալ Խորհրդի և անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների 2008թ. նոյեմբերի 21-ին Խորհրդի շրջանակներում կատարած եզրակացությունները[15] պետք է նպաստեն այս գործընթացին,
- Մեծացնել բարձրագույն կրթության դերակատարությունը մասնագիտական կրթության և ուսուցման, ինչպես նաև աշխատաշուկային ինտեգրվելու գործընթացի ուժեղացման մեջ:

4. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

- Կատարելագործել ՄԿՈՒ ոլորտում Եվրոպական համագործակցությանը նախապատրաստվելու գործընթացը՝ մասնավորապես մեծացնելով հավասար ուսումնառության գործընթացների արդյունավետությունը և կապիտալացնելով վերջիններիս արդյունքները ըստ ազգային քաղաքականությունների,

[15] Խորհրդի փաստ. 16206/08

- Երաշխավորել ՄԿՈՒ ինտեգրումը և տեսանելիությունը կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական համագործակցության ռազմավարական հետագա շրջանակի գերակայությունների մեջ, միևնույն ժամանակ երաշխավորել հստակ կապը ՄԿՈՒ և հանրակրթական կրթության, բարձրագույն կրթության ու մեծահասակների ուսումնառության քաղաքականությունների միջև: Ուժեղացնել երիտասարդների և լեզվի ուսուցման վերաբերյալ Եվրոպական քաղաքականությունների հետ կապերը,
- Ապահովել փոխառությունը և համագործակցությունը երրորդ երկրների և միջազգային այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են OECD, Եվրոպայի Խորհուրդը, Աշխատանքի Միջազգային Կազմակերպությունը և մասնավորապես UNESCO-ն: Այս աշխատանքին մասնակցելու անդամ բոլոր պետությունների իրավունքը պետք է երաշխավորված լինի:

ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԻՐԵՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

քայլեր ձեռնարկել վերոհիշյալ չորս ոլորտներում՝ հաշվի առնելով 2008-2010թթ. Կոպենհագենյան գործընթացի գերակայությունները.

- համապատասխան պետական և մասնավոր ֆինանսավորում՝ կիրառելով ԵՄ համապատասխան այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են Եվրոպական Սոցիալական Հիմնադրամը, Եվրոպական Տարածաշրջանային Զարգացման Հիմնադրամը և վարկերը Եվրոպական Ներդրման Բանկից՝ օժանդակելու բարեփոխումներին ազգային մակարդակով (անդամ պետությունների գերակայությունների համաձայն) և Ցկյանս Ուսումնառության Ծրագիրը՝ օժանդակելու հանրության գործիքների արդյունավետ իրագործմանը,
- ՄԿՈՒ վիճակագրության հավաստիությունը, համեմատելիությունը և ծավալները զարգացնելու վրա կենտրոնացած աշխատանքների

շարունակականություն՝ սերտորեն համագործակցելով Eurostat-ի, OECD-ի, Cedefop-ի և Եվրոպական Կրթական Հիմնադրամի (ԵԿՀ) հետ, և ՄԿՈՒ ավելի հստակ բաղադրիչների զարգացում ցուցիչների և նշաձողերի համակցված շրջանակում: Այս աշխատանքին մասնակցելու անդամ բոլոր պետությունների իրավունքը պետք է երաշխավորված լինի,

- հմտությունների կարիքների և անհամապատասխանությունների կանխորոշման վերաբերյալ մշակվող հետագա գործունեություն՝ սերտորեն համագործակցելով Cedefop-ի, ԵԿՀ-ի և Եվրոհիմնադրամի հետ,
- տեղեկատվության փոխանակում երրորդ երկրների, մասնավորապես զարգացման, ինչպես նաև Եվրոպական հարևանության քաղաքականության միտում ունեցող երկրների հետ:

Համագործակցությունն այսպիսի աշխատանքում պետք է լինի ներառական և իր մեջ ներառի անդամ պետություններին, Հանձնաժողովին, թեկնածու երկրներին, ԵԱԱՀ-ԵՏՏ երկրներին և սոցիալական գործընկերներին:

Cedefop-ը և Եվրոպական Կրթական Հիմնադրամը կշարունակեն աջակցել Հանձնաժողովին մասնավորապես առաջընթացի իրագործումը մշտադիտարկելու և արձանագրելու գործում:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ՄԿՈՒ առաջընթացի վրա Լիսաբոնի ազգային բարեփոխումների ծրագրերի ու կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական համագործակցության համար ռազմավարական հետագա շրջանակի վերաբերյալ արձանագրություններում: